# Օստապ Բենդերի շախմատ խաղալը 2

Սկսվել են «12 աթոռ» ֆիլմի նոր նկարահանումները: Համաձայն նոր սցենարի, Օստապ Բենդերը շախմատ միաժամանակյա սեանսի ժամանակ մի տախտակից աննկատ վերցնում է հակառակորդի սպիտակ թագուհին և փորձում է այն տեղադրել մեկ այլ տախտակի վրա: Բայց որպեսզի հակառակորդը չնկատի, նա որոշում է թագուհին տեղադրել այնպիսի ազատ վանդակում, որպեսզի այն հակառակորդի որևէ խաղաքարի չհարվածի: Ինչպե՞ս դա արագ անել: Օստապ Բենդերը դժվար կացության մեջ է: Շուտով կպարզվի, որ նա այնքան էլ լավ չի շախմատ խաղում:
Ձեր ծրագիրը պետք է հաշվի այն վանդակների քանակը, որտեղ Օստապ Բենդերը կարող է դնել սպիտակ թագուհին:

### *Մուտքային տվյալներ*

Մուտքում տրված է շախմատի դիրքը՝ սիմվոլների 8 տող, յուրաքանչյուրում 8 սիմվոլ: Սև խաղաքարերը նշված են b տառով, սպիտակ խաղաքարերը՝ w տառով: Ազատ վանդակները նշված են կետերով:

### *Ելքային տվյալներ*

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝ այն վանդակների քանակը, որտեղ սպիտակ թագուհին տեղադրելու դեպքում այն որևէ սև խաղաքարի չի հարվածի:

### *Օրինակներ*

| Մուտք | Ելք |
|---|---|
| ...b....<br>..bb.b..<br>........<br>...b....<br>...w....<br>........<br>.ww.....<br>....w... | 13 |
| bbbbbbbb<br>bbbbbbbb<br>........<br>........<br>........<br>........<br>wwwwwwww<br>wwwwwwww | 0 |